

Երեսնամյա այսպիսին

ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՍԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄԵԿՎՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ



Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի շնորհավորական ուղերձը Անկախության տոնի առիթով

Անկախության տոնի առիթով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինից Հայրապետական Մեր օրհնությունն ու բարեմաղթանքներն ենք բերում համայն մեր ժողովրդին՝ ի հայրենիս և ի սփյուռս:

Անկախ պետականության վերահաստատումը դարավոր նվիրական իղձ էր, որը մեր ժողովուրդն իրականացրեց հավաքական կամքով, իր բարօր ու խաղաղ կյանքը կառուցելու և ազգային արժեքներով ապրելու ձգտումով:

Այսօր մեր երկիրն ու ժողովուրդը անցնում են ծանր փորձությունների միջով՝ դիմագրավելով հետպատերազմյան դժվարություններն ու նեղությունները, արտաքին և ներքին բազում մարտահրավերներն ու հիմնախնդիրները:

Պետության հանդեպ մեր պատասխանատվությունը չի կարող հանդուրժել անարդարություն ու անօրինություն, ատելություն ու պառակտվածություն, կեղծիք և խաբեություն, այլ պիտի առաջնորդի մեր ժողովրդին համախոհության ու միասնականության, որպեսզի կարողանանք գտնել ներկա ծանր իրավիճակներից դուրս գալու ապահով ուղիները: Պետության հանդեպ մեր սերը պիտի դարձնենք վեր-

հառնումի նախանձախնդրություն, միմյանց հանդեպ վստահություն ու հոգատարություն և հանձնառություն ու նվիրում՝ ամեն աշխատանքում ու բնագավառում: Անկախության տոնը պատգամ է հավատարիմ մնալու ազգային գարթոնքի իղձերին, մեր արժեքներին ու սրբություններին և գորացնելու ու շենացնելու մեր պետությունը: Միայն այսպես կարող ենք ունենալ խաղաղ ու բարօր ապագայի հույս ու հեռանկար՝ սաղմոսերգուի հետ համապագ հայցելով Երկնավորից. «Հի-շիր մեզ, Տե՛ր, ի հանություն Բո ժողովրդի, և այցելի՛ր մեզ Բո շնորհելիք փրկությամբ» (Մատթ. 105.4):

Աղոթում ենք, որ Աստված խաղաղություն պարգևի մեր հայրենիքին և Եր Սուրբ Հոգու խնամաշնորհությունն ու առաջնորդությունը շնորհի մեր ժողովրդին՝ հույսով ու հավատով ուժ ու զորություն գտնելու մարտահրավերներին դիմակայելու և փայփայելու ու սերնդներունդ արժևորելու: Անկախության տոնի պանծալի խորհուրդը:

Թող ողորմությունը, շնորհներն ու օրհնությունը մեր Տե՛ր Հիսուս Բրիստոսի լինեն մեզ հետ և բոլորի, ամեն:



Ամենայն Հայոց Կաթողիկոսը հանդիպում ունեցավ Հռոմի Սրբազան Քահանայապետի հետ

Մեկտեմբերի 16-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ճայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը պատվիրակության և Սուրբ Աթոռի Քրիստոնեական միության խթանման բաժնի նախագահ կարդինալ Կուրտ Քոխի ուղեկցությամբ Վատիկանից մեկնեց Կաստել Գանդոլֆոյի առաքելական պալատ, ուր հանդիպում ունեցավ Հռոմի Սրբազան Քահանայապետ Լևոն 14-րդ Պապի հետ:

Եղբայրական ողջագուրումից հետո Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու և Հռոմի Կաթոլիկ Եկեղեցու Հովվապետներն ունեցան առանձնազույց:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր սրտագին շնորհավորանքները բերեց Սուրբ Պետրոսի Աթոռի գահակալին ընտրության, ինչպես նաև ծննդյան 70-ամյա նշանակալի հոբելյանի առիթով՝ հայցելով, որ Երկնավոր Տերը ուժ և կարողություն շնորհի նրան և առատ պտուղներով արդյունավորի Նորին Սրբության հովվապետությունը Աստծո փառքի և մարդկության խաղաղ ու բարօր կյանքի համար:

Վեհափառ Հայրապետը գոհունակությամբ անդրադարձավ, որ երկու Եկեղեցիների միջև եղբայրական կապերն ամրապնդվել են շնորհառատ հանդիպումների և հավատքի համատեղ վկայություն-



ների միջոցով՝ հիշելով երջանակահիշատակ Սուրբ Հովհաննես Պողոս Երկրորդ Պապի այցելությունը Հայաստան 2001 թվականին, ապա 2016 թվականին երջանակահիշատակ Ֆրանցիսկոս Պապին Սուրբ Էջմիածնում հյուրընկալվելու բարեպատեհ առիթը՝ «Այց առաջին քրիստոնյա երկիր» խորագրով ուխտագնացության կապակցությամբ:

Հայոց Եկեղեցու և Հռոմի Կաթոլիկ Եկեղեցու փոխհարաբերությունների հիշարժան հանգրվաններից Նորին Սրբությունը նկատեց 2015 թվականին Հայոց ցեղասպանության հարյուրերորդ տարելիցի կապակցությամբ Սուրբ Պետրոսի տաճարում մատուցված սրբազան Պատարագը և Հայոց Եկեղեցու մեծագույն սրբերից Գրիգոր Նարեկացու հռչակումը որպես Տիեզերական Եկեղեցու վարդապետ:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը վստահությամբ հայտնեց, որ երկու Եկեղեցիների հարաբերությունները կշարունակեն զարգանալ նույն եղբայրական ոգով ու ջերմությամբ՝ արդյունավորվելով նորանոր բարի համատեղ իրագործումներով:

Զրույցի ընթացքում երկու Հովվապետերն անդրադարձան աշխարհում տեղ գտնող արհավիրքներին ու մտահոգիչ զարգացումներին, Հայաստանի և հայ ժողովրդի առջև ծառացած մարտահրավերներին ու դիմագրավվող փորձություններին: Հռոմի Սրբազան Քահանայապետի ուշադրությանը հանձնվեցին նաև իրենց նախնիների բնօրրանից՝ Արցախից տեղահանված արցախահայության հիմնախնդիրները, Արցախում ոչնչացման վտանգի առջև կանգնած հայ իրգևը և մշակութային ժառանգության պահպանության, ռազմագերիների և պա-

տանդառվածների ազատ արձակման հրաձայականք:

Հովվապետերը կարևորեցին Եկեղեցիների առաքելությունը աշխարհում արդարության ու խաղաղության հաստատման, ժողովուրդների համերաշխ գոյակցության ապահովման գործում՝ հավատարիմ տերու-նավանդ կոչման՝ առատացնելու մարդկանց սրտերում հավատը, հույսը և սերը: Ընդգծվեց անհրաժեշտությունը՝ միավորելու Եկեղեցիների ջանքերը հանուն Ավետարանի լույսի տարածման, մարդկանց իրավունքների պաշտպանության և բարօր ու ապահով աշխարհի կերտման:

Վերջում Նորին Սրբությունը Լևոն 14-րդ Պապին հրավեր ուղղեց՝ այցելելու Հայաստան:

Հանդիպման ավարտին Ամենայն Հայոց Կաթողիկոսի պատվիրակության անդամներն ստացան Հռոմի Սրբազան Քահանայապետի օրհնությունը: Տեղի ունեցավ նվերների փոխանակում:

Վատիկան այցի շրջանակներում Ամենայն Հայոց Կաթողիկոսը եղավ նաև Հռոմի Սուրբ Մարիամ բազիլիկում, ուր երջանակահիշատակ Ֆրանցիսկոս Պապի շիրմի առջև աղոթք բարձրացրեց առ Աստված վախճանյալ Քահանայապետի հոգու հանգստության համար:

Հանդիպումներ Վատիկանում

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը սեպտեմբերի 15-ին և 16-ին Վատիկան պաշտոնական այցի ընթացքում հանդիպումներ ունեցավ Վատիկանի մի շարք կառույցների պատասխանատու կարգիմայների հետ:

Վեհափառ Հայրապետը հանդիպեց Վատիկանի պետքարտուղար կարդինալ Պիետրո Պարոլինի հետ: Զրույցի ընթացքում, ի շարս այլ հարցերի, անդրադարձ կատարվեց աշխարհի տարբեր կողմերում ծավալվող հակամարտություններին, ինչպես նաև մեր տարածաշրջանում զարգացումներին: Կայուն և երկարատև խաղաղության վերականգնման համար կարևորվեցին միջազգային հանրության, այդ թվում և քույր եկեղեցիների կողմից ներդրվող ջանքերը: Վեհափառ Հայրապետը հանդիպմանն առանձնակիորեն բարձրաձայնեց նաև հայրենագրված արցախահայության իրավունքների պաշտպանության, Արցախի հոգևոր-մշակութային ժառանգության անխաթար պահպանման և Ադրբեջանում անազատության մեջ պահվող ռազմագերիների ու պետական այրերի ազատ արձակման խնդիրները:



Ամենայն Հայոց Կաթողիկոսն այցելեց Սուրբ Աթոռի Արևելյան Կաթոլիկ եկեղեցիների բաժին, ուր հանդիպում ունեցավ կառույցի նախագահ կարդինալ Կլաուդիո Գուշերոտիի հետ: Նորին Սրբությունն իր գնահատանքը հայտնեց կարդինալին հայ ժողովրդի և Հայոց եկեղեցու նկատմամբ ջերմ վերաբերմունքի և օգտաշատ ծառայությանը համար:

Այս ընթացքում Վեհափառ Հայրապետը



հանդիպեց նաև Քրիստոնեական միության խթանման բաժնի նախագահ կարդինալ Կուրտ Քոխի, Մշակույթի և կրթության բաժնի նախագահ կարդինալ Ժոզե Տոլենտինոյի և Սուրբ Աթոռի պետությունների հետ հարաբերությունների քարտուղար արքեպիսկոպոս Փոլ Ռիչարդ Գալագերի հետ: Կառույցների ղեկավարների հետ քննարկվեցին Հայաստանյայց Առաքելական Սուրբ եկեղեցու, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հետ Հռոմի

Կաթոլիկ եկեղեցու գործակցության առավել ընդլայնման հարցեր, հայ ժողովրդի կյանքը հուզող հիմնախնդիրներ, քրիստոնյա աշխարհի առջև ծառացած մարտահրավերներ, քրիստոնեական արժեքների և ժառանգության պահպանման հրամայականներ:

Սեպտեմբերի 16-ի երեկոյան Ամենայն Հայոց Կաթողիկոսի զխավորած պատվիրակությունը վերադարձավ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին:

Մայր Աթոռում կատարվեց Հանրապետական մաղթանք



Սեպտեմբերի 21-ին, Հայաստանի Հանրապետության անկախության տոնի առիթով, հավարտ Սուրբ Պատարագի Միաձնաձե Մայր Տաճարի Իջման Սուրբ Սեղանի առջև, հանդիսապետությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի, կատարվեց Հանրապետական մաղթանք: Հոգևորականաց դասն ու ներկա հավատացյալ ժողովուրդն աղոթք բարձրացրին առ Աստված Հայաստանի Հանրապետության անասանության և հայ ժողովրդի խաղաղ, ապահով ու անվտանգ կյանքի համար:



ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց



Սեպտեմբերի 23-ին «Save Armenia» հուղայա-քրիստոնեական դաշինքի անդամներին

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց «Save Armenia» հուղայա-քրիստոնեական դաշինքի տնօրեն Մաթիաս Պերտուլլային և դաշինքի տնօրենների խորհրդի անդամ, քաղաքացիական իրավունքի պաշտպան, քրիստոնեական հավատքի դեսպան, Մարտին Լյուքեր Քինգ կրտսերի զարմուհի դոկտոր Ալվեդա Քինգին:

Զրույցի ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր գնահատանքը հայտնեց դաշինքի անդամներին և աջակիցներին՝ Հայաստանին ու հայ ժողովրդին ցուցաբերվող զորակցության և միջազգային հարթակներում հայության ծայրը լսելի դարձնելու ջանքերի համար:

Հանդիպմանն անդրադարձ կատարվեց Հայաստանի առջև ծառացած մարտահրավերներին և տարածաշրջանային անվտանգությանն առնչվող խնդիրներին: Այս առիթով Վեհափառ Հայրապետն իր մտահոգություններն արտահայտեց Ադրբեջանի կողմից ներկայացվող պահանջների, Բաքվում պահ-

վող ռազմագերիների, արցախահայության իրավունքների, ինչպես նաև Ադրբեջանի կողմից հայկական հոգևոր-մշակութային ժառանգության յուրացման և ոչնչացման փաստերի առնչությամբ:

Իր խոսքում Նորին Սրբությունը կարևորեց բարեկամ երկրների ու միջազգային հանրության ջանքերը՝ ի նպաստ տարածաշրջանում արդար և կայուն խաղաղության հաստատման:

«Save Armenia» հուղայա-քրիստոնեական դաշինքի ներկայացուցիչներն իրենց գորակցությունը հայտնեցին Հայոց եկեղեցուն և հայ ժողովրդին՝ արտահայտելով իրենց մտահոգությունները՝ արցախահայության ուսնահարված իրավունքների և Արցախի հայկական հոգևոր-մշակութային ժառանգության պահպանության կապակցությամբ: Վերջիններս ընդգծեցին, որ հիշյալ հարցերը պիտի շարունակեն բարձրաձայնել Միացյալ Նահանգների պետական բարձրագույն ատյաններում՝ վստահեցնելով, որ Հայաստանը չի մոռացվելու համաշխարհային մեծ իրադարձությունների հորձանուտում:

Սեպտեմբերի 24-ին

Գերմանիայի Այխշտետ-Ինգոլշտադի կաթոլիկ համալսարանի ներկայացուցիչներին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Գերմանիայի Այխշտետ-Ինգոլշտադի կաթոլիկ համալսարանի՝ քրիստոնյա արևելքի աստվածաբանության ամբիոնի՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին այցելած պրոֆեսորադասախոսական կազմին, աստվածաբանական ֆակուլտետի ուսանողներին՝ զխավորությամբ ամբիոնի վարիչ պրոֆեսոր Թոմաս վարդապետ Կրեմերի և Կոլլեգիում Օրիենտալի ռեկտոր Օլեկսանդր ավագ քահանա Պետրիկոյի:

Հայր Թոմասն Ամենայն Հայոց Հայրապետին ներկայացրեց համալսարանի կրթական ծրագրերը և գործունեությունը՝ տեղեկացնելով նաև, որ Հայաստան այցի նպատակն է ծանոթանալ հայ ժողովրդի պատմությանը, հոգևոր-մշակութային արժեքներին և գիտական ոլորտում համագործակցության հեռանկարներին:

Հայոց Հովվապետը, իր օրհնությունը բերելով հյուրերին, հաստատեց, որ համալսարանի ներկայացուցիչների այցը Հայաստան և ուխտագնացությունները տարբեր սրբա-

վայրեր առավել կնպաստեն երկրի պատմամշակութային ու հոգևոր ժառանգությանը հաղորդակից դառնալուն և հոգևոր փորձառությունը զորացնելուն: Այս առնչությամբ Նորին Սրբությունն անդրադարձ կատարեց հայ ժողովրդի կյանքում Սուրբ Էջմիածնի առանցքային դերակատարությանը, ընդգծեց, որ քրիստոնեական հավատքը դարձրեց շարունակ եղել է ազգային, հոգևոր արժեքների և հայի ինքնության կերտողը:

Իր խոսքում Վեհափառ Հայրապետը գոհունակությամբ փաստեց նաև քույր եկեղեցիների ու միջեկեղեցական կառույցների և Հայոց եկեղեցու միջև ձևավորված սերտ կապերի ու գործակցության մասին, ինչի շնորհիվ այսօր իրականացվում են կրթական, սոցիալական ու մշակութային տարբեր ծրագրեր:

Վերջում Ամենայն Հայոց Կաթողիկոսը պատասխանեց հյուրերի հարցերին, որոնք առնչվում էին Հայ եկեղեցու առաքելությանը, միջեկեղեցական և միջկրոնական փոխհարաբերություններին:



Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց



Սեպտեմբերի 26-ին Միջիգանի ՀԲԸՄ «Ալեք և Մարի Մանուկյան» ավագ դպրոցի աշակերտներին

Ամենայն Հայոց Կաթողիկոսը հյուրընկալեց Միջիգանի Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) «Ալեք և Մարի Մանուկյան» ավագ դպրոցի աշակերտներին՝ ուղեկցությամբ ՀԲԸՄ Հայաստանի նախագահ տիար Վազգեն Յակոբյանի:

Հանդիպմանը տիար Յակոբյանը, հայցելով Նորին Սրբության օրհնությունը, ընդգծեց, որ ուխտագնացության նպատակն է զորացնել սփյուռքի հայրերի կապը հայրենիքի և եկեղեցու հետ, ծանոթացնել նրանց հայ մշակույթին և հոգևոր ժառանգությանը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը, իր հայրական օրհնությունը բաշխելով աշակերտներին, գնահատեց հայտնեց ՀԲԸՄ-ի պատասխանատվությունը և դպրոցի տնօրենությանը նման նախաձեռնության համար, ինչը լավագույնս պիտի ծառայի ազգային ապրումների ու եկեղեցասեր ոգու զորացմանը:

Նորին Սրբությունն ընդգծեց, որ մեծ շնորհ ու պատասխանատվություն է լինել «Ալեք և Մարի Մանուկյան» դպրոցի սան, քանզի իրենց աչքի առջև ունեն ազգային մեծ բարերարներ Ալեք և Մարի Մանուկյանների լուսավոր օրինակը: Այս առնչությամբ Հայոց Հայրապետը պատգամեց առավել նախաձախնդրությամբ և ջանասիրությամբ շարունակել իրենց ուսումնառությունը և ձեռք բերած գիտելիքներն ու հմտությունները ծառայեցնել ինչպես տեղի հայ համայնքի, այնպես էլ հայրենիքի առաջընթացին՝ այդպիսով պայծառացնելով նաև մեծանուն հայրերի բարի անունն ու հիշատակը:

Վեհափառ Հայրապետն իր գնահատանքը բերեց դպրոցի տնօրենությանն ու մանկավարժներին՝ հայրերի ներքին հայեցի դաստիարակություն և կրթություն ապահովելու, նրանց հոգիներում հայրենիքի ու ազգային արժեքների համդեպ սեր ու նվիրում սերմանելու համար:



Անդրադառնալով ներկա ժամանակներում Հայաստանի առջև ծառացած մարտահրավերներին՝ Հայոց Հովվապետն իր շնորհակալությունը հայտնեց Քույր եկեղեցիներին հայ ժողովրդին ցուցաբերած զորակցության համար:



Սեպտեմբերի 29-ին Բրազիլիայի հայոց թեմի ուխտավորներին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Բրազիլիայի հայոց թեմի ուխտավորներին՝ ուղեկցությամբ Բրազիլիայի թեմի առաջնորդ Գերաշնորհ Ս. Նարեկ եպիսկոպոս Բերբերյանի:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր օրհնությունն ու պատգամը փոխանցեց ուխտավորներին՝ կարևորելով աշխարհասփյուռ հայոց թեմերից նման ուխտագնացությունների կազմակերպումը դեպի հայրենիք և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, որոնք ազգային ինքնության պահպանման և միասնականության գրավականն են: Այս առնչությամբ Վեհափառ Հայրապետը նկատեց,

որ հայրենիքի նկատմամբ սիրով ու ամուր հավատքով մեր ժողովրդի զավակները դիմագրավել և հաղթահարել են պատմության ընթացքում մեզ բաժին հասած բազմաթիվ փորձություններ, նաև վերապրելով Հայոց ցեղասպանությունը՝ տարբեր երկրներում վերակերտել ազգային-հոգևոր կյանքը և իրենց կարևոր նպաստը բերել հայրենաշինության գործին:

Հանդիպմանը Նորին Սրբությունը հորդորեց բրազիլահայ ուխտավորներին ամեն ջանք ի գործ դնել՝ զորացնելու իրենց համայնքը և օգտակար ծառայություն բերելու ազգին, հայրենիքին և եկեղեցուն:

Սեպտեմբերի 28-ին Ավստրիացի ուխտավորներին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ավստրիայի Գրաց քաղաքի Կաթոլիկ համալսարանական համայնքի ուխտավորներին՝ գլխավորությամբ Հայր Ալոիս Քյուրլի:

Նորին Սրբությունն իր օրհնությունը բաշխեց ուխտավորներին՝ ընդգծելով, որ այսօրինակ այցելություններն ամրացնում ու

զորացնում են եկեղեցիների միջև հարաբերությունները:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը գոհունակությամբ արձանագրեց նաև, որ Հայ և Կաթոլիկ եկեղեցիների միջև առկա են սերտ հարաբերություններ և արդյունավոր փոխգործակցություն:

Եվրոպայի Եկեղեցիների կոնֆերանսում Տիրան եպիսկոպոս Պետրոսյանը ներկայացրեց Հայ Եկեղեցու հարուստ փորձառությունն ու արդարության, արժանապատվության, խաղաղության տեսլականը

Սեպտեմբերի 15–17-ը Դանիայի Նյուբորգ քաղաքում տեղի ունեցավ Եվրոպայի եկեղեցիների կոնֆերանսի (ԵԵԿ) «Դեպի Եվրոպայի քրիստոնեական քաղաքացիություն» խորագրով հերթական համաժողովը: Միջոցառումը կազմակերպել էր Դանիայի քրիստոնեական եկեղեցիների ազգային խորհուրդը՝ սերտ համագործակցությամբ Եվրոպայի եկեղեցիների կոնֆերանսի հետ: Այն համախմբել էր Եվրոպայի ազգային եկեղեցական խորհուրդների և ԵԵԿ անդամ եկեղեցիների ներկայացուցիչներին: Խորքային քննարկման առարկա դարձավ քրիստոնեական քաղաքացիության ձևավորման և ամրապնդման կարևոր խնդիրը ժամանակակից Եվրոպայի համատեքստում: Ն.Ս.Ս.Ս. Գարեգին երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ Հայ եկեղեցին այս համաժողովին ներկայացրեց Կենտրոնական Եվրոպայի և Սկանդինավյան երկրների հայրապետական պատվիրակ Գերաշնորհ Ս. Տիրան եպիսկոպոս Պետրոսյանը: Արթուրյան հայրը զեկույց ներկայացրեց «Դեպի Եվրոպայի քրիստոնեական քաղաքացիություն» խորհրդածություններ Հայաստանից» խորագրով ներկայացնելով Հայ եկեղեցու հարուստ փորձառությունն ու տեսլականը՝ արդարության, արժանապատվության, խաղաղության և ժողովրդավարական արժեքների զարգացման ուղղությամբ:

Հանդիպման վայրի ընտրությունը նույնպես խորհրդանշական էր. Նյուբորգը Դա-



միայի բարենորոգության պատմության կարևոր կենտրոններից է, որտեղից էլ

1959 թվականին սկսվել են Եվրոպայի եկեղեցիների կոնֆերանսի խաղաղարար նախաձեռնությունները: Նյուբորգի այս հավաքը նպատակ ուներ ամրապնդելու Եվրոպական եկեղեցիների համագործակցությունը, նոր թափ հաղորդելու նրանց առաքելությանը մեթոդա մարտահրավերների պայմաններում և խթանելու քրիստոնեական քաղաքացիության ընկալումն ու իրագործումը՝ հիմնված արդարության, ազատության և արժանապատվության սկզբունքների վրա:

Լրատվական նյութերը՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տեղեկատվական համակարգի

Հայտարարություն

Ս. Միքայել արքեպիսկոպոս Աջապահյանին ակնհայտ շինծու մեղադրանքներով մեղավոր ճանաչելու դատարանի այսօրվա վերդիկտը լրջագույն հարված հասցրեց Հայաստանում արդարադատությանը և արդարադատության մարմինների հեղինակությանը:

Երկրում շարունակ սերմանվող ատելության և բռնաճնշումների պայմաններում կայացված անոթային այս դատական ակտը հերթական անգամ հաստատեց, որ ՀՀ-ում դատաիրավական համակարգն ամբողջությամբ կախվածության մեջ է քաղաքական իշխանության կամքից:

Ցավալի է արձանագրել, որ հայրենի մեր երկրում արդարադատությունն ընտրողական է և կամայական որոշումներով անթաքույց ծառայեցվում է քաղաքական քիմախնդրությանը:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը խստորեն դատապարտում է ապօրինի այս գործընթացը և օրենքով սահմանված բոլոր հնարավորություններն օգտագործելու է՝ հասնելու Միքայել արքեպիսկոպոսի հանդեպ արդարության վերականգնմանը:

Աղոթում ենք, որ Տերը զորացնի, ամուր ու անկոտրուն պահի Միքայել և Բագրատ արքեպիսկոպոսներին, ազգային մեծանուն բարերար տիար Սամվել Կարապետյանին և ազատությունից ապօրինաբար զրկված բոլոր անձանց:

«Արդար է Տերը, արդարություն է սիրում, ճշմարտությանն է նայում երեսը Նրա» (Սաղմ. 10.8):

24.09.2025 թ.

